

ՇԱՐԵԿԱՆ ԳԻՆԵԼ:

Տարեկան գինն է 5 ռուբլի (խոտաի ծախսով): Օտարաբարա-
բացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. Վո Կոմիտե.
Во Редакцію Армянской Газеты „Արարատ“.
Քիֆիստում կարելի է ստորագրվել խաղաղատան մէջ (Սրբորու-
նաւ տան) և պ. Եսատուրեանցի խանութում:

ՄԱՇԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տալու տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւններ
տպւում են չայերէն, ռուսերէն, վրացերէն, նրաւարիւն, Գերմա-
ներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒԹԻՒՆ

Հիմի ժամանակ է. — Երբ ինչ տեսնու-
թիւն: Ո՛վ է մեղաւոր: Դամակ Զարաթաշից:
Դամակ Դամախուց: Դամակ Ագուլիսից: Դա-
մակ Գանձակից: Դամակ Արեւմտահայաստանից:
Դերբին լուրեր: — Արտաքին տեսնութիւն: —
Տրամադրանք: Գերմանիա: Աւստրիա: Փրիւսիա:
Իտալիա: Իսպանիա: Արաբիկ լուրեր: — Եւրո-
պայի մէջ: — Առեւտրական: — Յայտարարութիւն-
ներ:

ՀԻՄՆԻ ԺԱՄԱՆԱԿ Ե

I

Ինչո՞ւնք չէ՞ զայս հասարակութիւնը երեւի
յիշում է որ „Հայկական Աշխարհ“ ամսա-
գրում տպւում էին քանի մի յօդվածներ
համալսարանի խնդրի վերա, որտեղ յօդ-
վածագիրը յայտնում էր այն միտքը, թէ թիւթ-
իւտում համալսարանի հիմնը գիւտ վաղ է, որ
մեր հասարակութիւնը և ընտանիքը չէ կարող
բարեկարգ ազդեցութիւն ունենալ ուսումնա-
նոց երիտասարդ սերունդի վրա: Զօղվածագիր
կարծիքով թարմ ոգով, նախապաշարմունքից
ազատ, ճշմարիտ դիտական և աշխատասեր
երիտասարդութիւնը պատրաստուել համար,
պէտք է մեր նոր սերունդը կրթվի օտար եր-
կիրներում, մեր հասարակութիւնը և ընտանիքի
անխախտ շնորհաւորութիւններ հետո:

Յիշալ յօդվածները ստորագրված էին մի
անունով, որ անմիջական կապված է այժմ
„Մշակ“ լրագրի հետ:

Այդօրը իր հակառակները մենք այն խօս-
քերէն, որոնց համար մասամբ „Մշակի“ այժ-
մեան ուղղութիւնը պիտի պատասխանատու
լինի, թէ իր կրկններն այն մտքերը, որ „Հայ-
կական Աշխարհ“ էջերում տպւեցան 1867 և
1868 թուականներում:

II

Աւերմն այն յօդվածները տպւեց յետոյ
անցել են հինգ կամ վեց տարի, բազմաթիւ
հայ երիտասարդութիւնը այդ միջոցում
կրթվեցան թէ Ռուսաստանի թէ Գերմանիայի
և Եւրոպայի համալսարաններում, մի բա-
նիստը մեր հայրենակիցներին աշխատելով
Եւրոպայի համալսարաններում ստացան գիտ-
նական աստիճանները, միւսներին աջողվեցաւ
գիտական հետազոտութիւններով անուն ան-
գամ ստանալ գիտութեան մէջ: Եւստիկին
մերոնցից առաջարկեցան տեղեր և պա-
րապմունք օտարութեան մէջ, որ ոնցից միւսը
ընդունեց պրոֆէսորութեան պաշտօնը, իսկ
մնացածները, եթէ այդ տեսակ վճարական
բայլ չարեցին, (գուցէ այժմ և փոքրամիտ են)
նրանց յետադանալու շարժառիթը իրանց
անհիւրասեր հայրենիքը մի տեսակ իրէպա-
կան զգացմունքներ հասարակական պար-
տաւորութեան օկզբից ծնված...

Եւթմ կայ մի խումբ լուսաւորված երի-
տասարդներ, որք մի կողմից ժաւնաղէտ-
նեի են ամեն տեսակ ճիւղերում, միւս կող-
մից լուսաւորված մարդիկ են, որք պար-
տաւոր են իրանց մարդկային դատաւարներով
ոչ թէ միայն եւրոպական լուսաւոր շրջանների
ազդեցութեան, բայց և այն հանդամներին,
որ մեծ հեռավորութեամբ բաժանված են եղի

քանի մի տարի շարունակ հայրենակից հասա-
րակութեան և ծնողների յետադէմ ազդեցու-
թեանից

III

Այդ պատրաստ է մի խումբ, նա խնդրում է
աշխատանք, կարօտ է գործունէութեան,
բայց դու հասարակութիւն և դու ընտանիք
ի՞նչ ես տալիս նրանց, ի՞նչ գործադրութիւն
ես անում քո զաւակների հմտութիւններից...
առ այժմ ոչինչ

Այդ բաւական չէ՞ երկու երեք տարից յի-
սոյ այդ խմբին կաւելանայ մի նոր խումբ,
յետոյ էլի մի նոր խումբ, տարից տարի նա
կաճէ, իսկ դուք դարձեալ անշարժ եր մնաք

Յետոյ..... ի՞նչ դուք խուլ կը մնաք վերա-
նորոգութեան հոսանքին, անդորձադրելի կը
թողնէք գիտական նոր, թարմ ոյժերը, շա-
տերը դուք կը հետեւն այն միւրի օրինակին,
և կը մնան օտարութեան մէջ:

Մենք դարձեալ աւելի յոյս ենք դնում
հասարակութեան քան թէ ընտանիքի վրա:
Ամենանշարժ հասարակութեան վրա ըլլալ շատ
ազդեցութիւն ունի հասարակական կար-
ծիքը, իսկ անկիրթ հասարակութեան ըն-
տանիքի դարեւոր անշարժութեան չնական
պատկեր երկար ժամանակ անգործ է յաղթել
լուսաւորութեան հոսանքը

Աւերմն քեզ հայ հասարակութեանը դիմե-
լով, առաջարկում ենք հետեւեալ հասարակ և
ընական հարցը՝ արդեօք այն, որ մենք հիւ-
բում էինք 1867 և 1868 թուականներում, ժամա-
նակ չէ՞ այժմ իրադրուել, կամ գոնէ մտածել
նրա իրադրման կարելութեան վրա:

Այն ժամանակ դու չունէիր գիտական
երիտասարդներ խումբ, — այժմ ունես և քանի
կիրթայ, տարից տարի կաւելանայ նրանց թիւը:

Այն ժամանակ դու չունէիր քո և մեր ըն-
տանիքի ազդեցութիւնը հետո կրթված երի-
տասարդութիւնը, — այժմ դու ունես նոր սե-
րունդը, որ, հանգամանքների շնորհով, քո ազ-
դեցութիւնից ազատ ընդունեց ընդհանուր
մարդկային գաղափարները

Բերանից կտրված կը լինի այդ նոր ոյժից
օգուտ քաղել կենդանացնելով նրան մի ու-
սումական ընկերութեան մէջ, մի համալ-
սարանի մէջ

Եթէ ոչ

Եթէ ոչ

Եթէ ոչ

Եթէ ոչ

րեւու միջոցը... մեր առաջաւոր անձինքը
և մի քանի անմահ անուններ հարուստ Հայ
անհատների միայն բացառութիւն են կազմում.

առաջինները անխոջ գործում են, չը նայելով
իրենց կրած բոլոր դժուարութեանց և նեղու-
թեանց, մինչև անգամ երբեմն և ինքնագոհ
լինելով հասարակութեան օգտին, իսկ երկրոր-

դները ահաղին գումար են նուիրում ազգի
պիտոյներից պակասորդը լրացնելու համար.
բայց առ հասարակ ամենայն անձ հետևում է
իւր անձնական բարօրութեան և շահին. նա

գուցէ և պատրաստ է հասարակաց օգտին
ծառայելու մէջ մասնակցելու, բայց միայն այն
պայմանաւ, եթէ ընդհանրի շահի հետ կցոր-

դած է և նորա անձնական շահը, երբ նա
հասարակութեան ծառայելով, կարող է նոյն
ժամանակ և իւր անձնական պիտոյը լրացնել,
երբ միով բանիւ վերոյիշեալ անհրաժեշտ ճիշ-

մարտութիւն տեղի ունի թէ. „Միւր ամենքի
համար և ամենքը միին համար“: Այո, բը-
ժելով գործընկալ պատրաստ է իւր ծառա-

յութիւնը առաջարկել հասարակութեանը,
երբ վերջինս հոգում է նորա անձնական բա-
րօրութեան վերայ, երբ վերջինս գնահատում է

նորա գործունէութիւնը և չէ վերում նորան
արդար վաստակից: Այո, ուսուցիչը պատ-
րաստ է կրթել համազգի մանկոքը, պատ-

րաստ է մինչ ստանում է իրեն որոշեալ ու-
ճիւղ, մինչ ապահովուած է նիւթապէս իւր
ռոճիկով: Այո՞ ո՞ր ուսուցիչը, կամ ո՞ր բժիշկը,

յանձնառու կը լինի ծառայել հասարակու-
թեան օգտին առանց որոշեալ ռոճիկի, առանց
իւր կոչման համապատասխան միջոցների և

պայմանների՝ նա մանաւանդ այն ևս դաւա-
ռական աղքատ և փոքրիկ քաղաքում... ո՞վ
մեզանից, շատ էլ աղքատի լինելի նա, յանձ-

նառու կը լինի բարձել իւր վերայ ծառայու-
թեան ծանր լուծը հասարակութեան օգտի
համար, մինչդեռ նա ինքն գուրկ է անձնական
բարօրութեան, կամ գոնէ կենսական անհրա-

ժեշտ պիտոյները լրացնելու միջոցներից, մինչ-
դեռ նորա ծառայութիւնը չէ տալի նորան
ոչ մի յոյս վերոյիշեալ միջոցները ձեռք բե-

րելու, երբ նորա միակ յոյսը պիտի լինի ժաւ-

իւրանց անբաւականութեանը ճար անել պաշ-
տօնին փոխելով, որովհետեւ աշխարհական են.
Իսկ դու, դու հոգեւորական ես, քեզ վերոյի-

շեալ կարգ կանոն բաց յայնմանէ որ բուռա-
կանացուցիչ միջոց չէ տալի, քո ձեռքից խլել է
և այդ ազատութիւնը. կամայ, ակամայ պիտի
հնազանդես քո ճակատագրին... ի՞նչ ելք ունի

և կարող է միայն ունենալ հայ բահանայն...
Անշուշտ այն, ինչ որ և տեսնում ենք... մե-
ղադրելի է արդեօք այսուհետեւ՝ քահանայի

ձեռք բերելու, կողոպտելու ոգին. ոչ, պա-
տասխանում եմ և կը պատասխանեմ ես միշտ
քահանայի մի միակ ելքը՝ այդ է և ուրիշ

չէ կարող լինել, քանի որ մեր քահանայի
դրութիւնը կը մնայ իւր դարեւոր պապա-
կան մամական անփոփոխութեան մէջ: Խօսք-

ներսուտ լիակատար հաւատ ընծայելու համար,
կրեակայիւր ընթերցող, թէ և անկրեակայիւր է
այդ, ի՞նչ կը լինէր, եթէ բժիշկը և ուսու-

ցիչը նոյնպէս ենթարկուէին վերոյիշեալ կարգ
կանոնին... հաւատացնում եմ քեզ, սիրելի ըն-

թերցող նորա ոչ պակաս կը հարստահարէին մեզ,
չը նայելով որ նորա բարոյական զարգացմամբ

քահանայից շատ վեր են. ուրեմն, ի՞նչու մեզ
այնքան խորթ պիտի թուայ քահանայի կո-

ղոպտելը, երբ այս շատ բնական է ամենայն
մահկանացուի համար, երբ նա նոյն դրութեան
մէջ լինէր, որում ցարդ գտնվում է քահա-

նայն: Վառանքը այժմ փոքր ինչ մանրամաս-
նորեն խօսելու մեր քահանայի դրութեան վե-

րայ: Մեր քահանայն չունէ որոշեալ ուժովի,
արդեանց հիմնաւոր արդիւր. նորա միակ յոյսն է
ժողովրդեան կամաւոր օժանդակութիւնը, իւր

ծուրձը որ պիտի ըստ իւր կամայ ապահովէ
նորա կենսական պիտոյները ժամացով, գան-
ձանակով, մկրտութեան, պատկի, թաղման և

ուրիշ եկեղեցական պաշտամանց համար կա-

Չը նայելով իտալական տէրութեան արգել-
ման, այս օրերս եկան Հոմ 80 ուստապնոց-

